

ՅՈՒՐԵՆԵԱՐՆ

Տ. ԽԱՇԽԱՆ ԿՐԹ. ՊԱՐՄԱՄԵՆՆ

ԳԱՐԵԳԻՆ Ա. ՊԱՏՐԻԱՐԺ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ
(1951-1960)(Ներկայացում՝ Յունիս 11-ին (2011) Փարիզի մեջ, Պոլսոյ Ս. Խաչ Դպրեվանքի
Երոպայի Սանուց Միութեան կազմակերպած հաւաքոյթի ընթացքին)

Լրիւ կէս դար անցած է այն օրէն երբ երջանկայիշարակ Տ. Գարեգին պարրիարք Խաչապուրեան փակեց իր աչքերը յախրեմապէս: Այսօր՝ ժամանակի հեռաւորութենէն՝ կը ճառագայթէ պայծառ յիշարակը այդ մեծ հոգեւորականին, որուն հոգիի եւ մարմնի յղացումը հանդիսացող Պոլսոյ Ս. Խաչ Դպրեվանքին սաներս եւ հանգուցեալ Խաչապուրեան Պարրիարքի յիշարակը յարգող Նայ Եկեղեցոյ զաւակներս այժմ հաւաքուած ենք այս սրահին մէջ՝ մեր երախտագիտութիւնը յայտնելու անոր՝ մեզի պրօւած ուսման եւ մանաւանդ ազգային քոհմիկ ոգիին համար:

Նախքան ինք Խաչապուրեան Պարրիարքի անձին ու գործին յիշարակութեամբ խանդավառուած՝ շեշտելու Նայ հոգեւորականի կարեւոր դերն ու առաքելութիւնը այսօրուան Նայ կեանքէն ներս: Աղօթելու անոր հոգիի խաղաղութեան համար եւ շարունակելու անոր առաքելութիւնը այսօրուան պայմաններուն մէջ թէ՛ Նայասրանի եւ թէ՛ սփիւրքի փրօւածքին:

Նախ կը փափաքիմ իմ խորին շնորհակալութիւնս յայտնել Պոլսոյ Ս. Խաչ Դպրեվանքի Երոպայի Սանուց Միութեան անդամներուն՝ որոնք ինծի այս հոգեպարար առիթը ընծայեցին՝ իրենց հետ ըլլալու ու բաժնելու իմ զգացումներս ու մտածումներս մեր սփիւրքի Դպրեվանքին հիմնադրին մասին, որուն հոգիին ներկայութիւնը զգացած ենք ամէնքս մեր պարանկութեան օրերուն՝ Ս. Խաչ Դպրեվանքի երդիքին փակ:

Երջանկայիշարակ Տ. Գարեգին Պարրիարքին շար կը յարմարի հիներու այն խօսքը՝ թէ «մահկանացու եկաւ բայց անմահ յիշարակ թողուց»: Անոր կենսագրական գիծերը կարելի է մի քանի բառերով ներկայացնել՝ երիպասարդական օրերէն սկսեալ մինչեւ խորին ծերութիւն համեստ, ժուժկալ կեանք մը, որ յարուցէ իսպառնքիք վանականներու: Մեզի համար՝ որպէս հայ քրիստոնեայ այդ կեանքը ունի օրինակելի եւ ուսանելի շար կողմեր:

Տրապիզոնի մէջ 1880-ին հայ քոհմիկ ընտանիքի մը ծոցին մէջ իր աչքերը լոյսին բացող Խաչիկ անուամբ մկրտուած մանուկը, իր նախնական կրթութիւնը պիտի ստանար Պոլսոյ մէջ: Նայրը ուսումը սիրող ջերմեռանդ հաւարացեալ հայ մըն էր, որ 1867 թուականին ծառայած էր Երասաղէմի ժառանգաւորաց վարժարանին մէջ որպէս հսկիչ: Ուսման ծարար նախ պիտի առաջնորդէր պարանի Խաչիկը Վենետիկի Մուրատ Ռաֆայէլեան վարժարա-

նը, ուսկից երկու տարի ետք պիպի անցնէր Արմաշի Դպրեվանքը և երեք տարուան ընծայարանի շրջանը աւարտելէ ետք կուսակրօն քահանայ պիպի ձեռնադրուէր 1901-ին: Տնտեսագայ վեց տասնամեակները պիպի ըլլային անոր համար ծառայութեան տարիներ Աստուծոյ՝ Տայց, Եկեղեցոյ և հայ ժողովուրդին միջոցաւ:

* * *

Երջանակայիշարակ Գարեգին պատրիարքը որպէս հայ հոգևորական և մարտրական կաղապարող և կազմաւորող հաստատութիւնը եղած է Արմաշի Դպրեվանքը, որ սկսած էր գործել 1890-ին՝ հայաբնակ Արմաշ գիւղի հնօրեայ Չարխաւիան Ս. Աստուածածին վանքին մէջ՝ նախ Մաղաթիա Օրմանեան Սրբազանի վերաբեմնութեամբ և ապա Եղիշէ Դուրեան Սրբազանի շունչին ներքեւ: Արմաշի վանքը հանդիսացաւ արեւմտահայոց կրօնական վերագործումին ակնադրիւրը և անոր սաներուն գործունէութիւնը նախ արդիւնաւորուեցաւ Արեւմտահայաստանի, Պոլսոյ և Փոքր Ասիոյ մէջ, իսկ հետագային՝ ծաւալեցաւ մինչև Երուսաղէմ, Անթիլիաս և Նոյնիսկ Ս. Էջմիածին: Կարելի է հաստատել երկու յայտնել թէ այսօր մեր եկեղեցոյ մէջ ծառայող հոգևորականները աշակերտներն են հոգևորական և աշխարհական ուսուցիչներու, որոնց ուսուցիչները աշակերտած են Արմաշականներու:

Արմաշի վանքին մէջ էր որ երեք տարի պատանին Խաչիկ աշակերտեցաւ առ ուրս մեծանուն Եղիշէ Դուրեան Սրբազանին, Ի. դարու Տայ Եկեղեցոյ մեծագոյն ուսումնական և ազնուական վարդապետին: Արմաշի կրօնաբոյր մթնոլորտին մէջ կաղապարուեցաւ պատանի և երիտասարդ Խաչիկի միտքն ու հոգին: Արմաշի Դպրեվանքը անոր և միւս ժառանգաւորներուն և ընծայացումներուն համար հոգեւոր դպրանոցէ շարք աւելին հանդիսացաւ: Չարխաւիան Ս. Աստուածածնի վանքը իսկական հայ մեկնաստան մըն էր՝ հարիւրաւոր տարիներու պատմութեամբ, աւանդութեամբ և միաբանութեամբ: Նիկոմիդիոյ գաւառակին հիւսիս արեւմտեան անկիւնը՝ մի քանի տասնեակ հայաբնակ գիւղերով և գիւղաքաղաքներով շրջապատուած այդ վանքը սիրուած ուխտաւորին էր շրջակայքի, մօտակայ քաղաքներու և Պոլսոյ հայութեան: Այդ հայկական կրօնաբոյր մթնոլորտին մէջ՝ Դպրեվանքի ժառանգաւորները հոգեկան և իմացական գոյր հայեցի սնունդ պիպի ստանային Օրմանեանի և Դուրեանի նման բազմահմուր ուսուցիչներէ: Իսկ բարեպաշտական և ազգային ոգին գերազանցապէս պիպի աճէր անոնց մէջ շնորհիւ մերձակայ գիւղաբնակ, գաւառաբնակ հայ ժողովուրդի անշեղ հաւատքին և հազարաւոր ուխտաւորներու ջերմեռանդութեան: Տինէն եկող վանական աւանդութիւնը և այդ աւանդութեամբ սնած հին ու նոր միաբանութիւնը, որուն մաս կը կազմէր Դպրեվանքի սկզբնական հունձքը, առաւել եւս պիպի ներշնչէր նորեկ պատանի ժառանգաւորները և պիպի գորացնէր անոնց մէջ հոգեւոր կոչումը: Կարեւոր է յիշել նաեւ թէ մինչև Ա. Տամաշխարհային պատերազմ՝ հայաբնակ քաղաքներու և գաւառներու քաջուշեղ, աշխատասէր և եկեղեցասէր պատանի աշակերտները միայն կ'ընտրուէին և կ'ուղարկուէին Արմաշ և կամ Ս. Էջմիածնի Գեորգեան ճեմարանը: Եւ ի պատիւ արմաշականներու՝ Դպրեվանքի սաներուն բացարձակ մեծամասնութիւնը՝ հաւաքաբիւ իր կոչման՝ վերադարձաւ գաւառ, ծառայելու համար հայ ժողովուրդին՝ որպէս առաջնորդ, քարոզիչ և ուսուցիչ: Այդ սաները եկած էին հայ ժողովուրդի ծոցէն և վերադարձան հայ ժողովուրդի ծո-

ցը, անոր փոխանցելու ազգային անհաղթելի գանձերը, անոր հետ պրնելու, 1915-ին անոր հետ քաղաքացիական և անոր հետ նահապետականություն:

Արմաշի Դպրեվանքն է որ եղա մերթի և հոգիի ճուրարանը Կիլիկիաններու, Գուշակեաններու, Նարոյեաններու, Խաչապուրեաններու և մարտիրոսացած հոգեւորական և աշխարհական բազմաթիւ սաներու և նուիրեալներու: Առաքելափայ և ազնուաշուք Եղիշէ Պապրիարք Դուրեանը, իր ինքնակերպ իմացականութեամբ, խորապէս պիտի ներշնչէր բոլորը: Այդ մեծ վարդապետին նման անոր աշակերտներն ալ առանց բարձրագոյն երոպական ուսումնական կեդրոններ յաճախելու պիտի կարենային ինքնաշխատութեամբ կապրելագործման հասցնել իրենց գիտութիւնը մէկէ աւելի մարգերու մէջ: Այս պարագան բացայայտ է 1901-ին Դուրեանի իսկ ձեռքով քահանայ ձեռնադրուած Գարեգին պապրիարքի մօտ, որուն կեանքը՝ մինչև պապրիարքական բարձագոյն աստիճանը և վախճանը՝ անցաւ աղօթելով, կարդալով, սորվելով, սորվեցնելով, խրատելով, հեղափոխելով, ուսուցանելով, գրելով և քարոզելով:

Գարեգին աբեղային ուսուցչական գործունէութիւնը արդէն սկսած էր այն տարիներ, երբ Դպրեվանք ընդունուած էր որպէս 98-րդ ժառանգաւորը: Մինչև իր ձեռնադրութիւնը ան հայերէնի և հայոց պատմութեան դասաւոր կարգուած էր դպրոցի նախապապրաստական դասարաններուն: Այդ ուսանողական օրերուն իսկ պապրաստած էր դասագիրք մը նուիրուած հին Բսրայէլի պատմութեան: Վարդապետանալէ ետք՝ 1903-1904 և 1909-1910 թուականներուն Դպրեվանքի մէջ ոչ միայն ուսուցչութիւն պիտի ընէր, այլև՝ փոխընդհատութիւն և ապա քննութիւն: Իսկ միջանկեալ տարիներուն՝ 1906-1909, ան Մեծի Տանն Կիլիկիոյ Սահակ Խապայեան Կաթողիկոսի կողմէ պիտի նշանակուէր որպէս Սիսի մայրավանքի ժառանգաւորաց վարժարանի վերադասուց, միջանկեալ շրջան մըն ալ ծառայելով Մարաշի Կեդրոնական Վարժարանին մէջ՝ որպէս քննուց: Բարեփախութիւն է որ Գարեգին վրդ. զոհ չգնաց ցեղասպանութեան: Նակառակ Մամպուճ աբեղութիւն՝ ան յաջողեցաւ ձեռով մը փրկուիլ սպանողէն՝ պատերազմի տարիները անցընելով Նախա և ապա Երուսաղէմ, ուր պիտի նշանակուէր որպէս ժառանգաւորաց վարժարանի ուսուցիչ: 1922-ին կալիսկոպոս ձեռնադրուելէ և Պոլիս վերադառնալէ ետք ևս պիտի շարունակէր ուսուցչական իր գործունէութիւնը Պոլսոյ Կեդրոնական Վարժարանին մէջ: Ահա երիտասարդ հոգեւորական մը, որ իր կեանքին օրերը՝ մինչև միջին տարիք՝ անցուց ուսուցչութեամբ և քարոզչութեամբ:

Արմաշական վարդապետներու յատուկ բնութագրութեան տալանդը ունէր նաև Գարեգին Պապրիարք: Քահանայական ձեռնադրութիւն ստանալէ քիչ ետք ան պիտի նշանակուէր քարոզիչ Պոլսոյ թաղային կարգ մը եկեղեցիներու մէջ 1901-էն սկսեալ մինչև Արմաշ վերադառնալը: Նկարագային ան պիտի կարարէր Բանին կենաց քարոզչութիւնը ուր որ ալ ըլլար, մինչև հետաւոր վայրեր Ֆրանսա, Գալիֆոռնիա և Նարաուային Ամերիկա: Իսկ հին պոլսահայեր և դպրեվանքցիներ մինչև այսօր կը յիշեն իր իմաստաւոր և բովանդակաւոր քարոզները և խրատականները, խորքով և բովանդակութեամբ կրօնաբոյր և նոյնքան ևս ազգային:

1951-ին՝ Գարեգին արքեպս. պիտի բազմէր Պոլսոյ պապրիարքական աթոռին վրայ տարիներու հսկայ հովուական և վարչական վաստակով մը: Յարկանշական է, որ իր վարդապետական աւարտաճառին նիւթը եղած էր «Հովուական թողութիւն», որ վստահաբար

հիմքը հանդիսացաւ իր քրասնամեակներու վրայ երկարաձգուող հովուական արգասաբեր գործունէութեան: Այլ Արմաշականներու նման՝ ինք եւս աշխարհած էր նշանաւոր վարչագէտ Օրմանեան Սրբազանի անմիջական հսկողութեան ներքեւ եւ դիպած էր անոր գործելու կերպը: Օրմանեան Սրբազան իր «Խոհք եւ խօսք» աշխարհասիրութեան մէջ կ'ընդգծէ Գարեգին վարդապետին վարչական ձիրքերը եւս: Այդ վաստակը սկսաւ Մարաշի մէջ, ուր վեց ամիս պաշտօնավարեց որպէս առաջնորդական փոխանորդ քեղոյն առաջնորդ Արմաշական եւ դասընկեր Կորիւն վարդապետին, որուն վաղաժամ վախճանումէն ետք 1908-ին ինք ընտրուեցաւ առաջնորդ Բայց անցաւ այլ պաշտօնի: Իսկ 1911-էն 1913 քարիններուն ան եղաւ իմ ծննդավայր Արաբկիրի վերջին ընտրեալ առաջնորդը: Այդ պաշտօնէն ետք եւ պատերազմի վաղորդայնին՝ եղաւ առաջնորդ Գոնիայի թեմին, զոր վարեց յաջողութեամբ՝ ըստ Օրմանեան Սրբազանի: 1928-ին կը գտնուէր զինք հեռաւոր Գալիֆոռնիա՝ որպէս առաջին առաջնորդը եւ կազմակերպողը այդ նորակազմ թեմին: 1935-ին անցաւ հարաւային Ֆրանսա որպէս Նայրապետական Պատուիրակ: Իսկ երեք տարի ետք (1938-ին) նոյն բարձր պաշտօնով գնաց Նարաւային Ամերիկա, ուր մնաց մինչեւ 1950, երբ ընտրուեցաւ պատրիարք: Գարեգին Սրբազանով սկիզբ առաւ Նարաւային Ամերիկայի մէջ թեմական կազմակերպչական աշխատանքը, որուն կը պարփինք այժմեան երեք գործունէայ թեմերը, որոնք վերջերս անգամ մը եւս արժանացան հայրապետական հովուական այցելութեան:

Նայաշխարհի գաւառական կեդրոններէն եւ Եւրոպայի ու Ամերիկաներու մեծ քաղաքներուն մէջ ցրուած մեր ժողովուրդի բնկորներէն քաղած իր հարուստ փորձառութիւնները վայելեց Պոլսոյ հայութիւնը 1951-էն 1960 քրասնամեայ շրջանին: Ալետր հոգեւորականը իր ամբողջ գիտութիւնը, քաղաքը, կարողութիւնը, գրիչը եւ խօսքը ի սպաս դրաւ յօգուտ իրեն յանձնուած հօտին: Իր պատրիարքական ընտրութեամբ իսկ վերջ գտաւ այն երկարամեայ պայքարը որ երկփեղկած էր հօտը Տ. Մեսրոպ Նարայեան պատրիարքի վախճանումէն ի վեր: Գարեգին պատրիարք յաջողեցաւ բուժել այդ անբուժելի թուացող վէրքը եւ անցաւ դրական աշխատանքի: Վերահասարակեց սերտ, յարգալից եւ սիրալիք կապը պատրիարքութեան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեւ՝ դարձնելով զայն անխզելի: Եղաւ գլխաւոր գործակիցը նորընտրուած Ընդհանրական Նայրապետին՝ Տ. Վազգէն Ս. Կաթողիկոսին եւ երբ անձնապէս հանդիպեցաւ անոր Գահիրէի մէջ 1956-ին, առաջինը ինք եղաւ խոնարհելու եւ համբուրելու Նորին Արքութեան Սուրբ Աջը՝ օրինակ հանդիսանալով միւս բոլոր բարձրաստիճան հոգեւորականներուն: Միշտ նախանձախնդիր եղաւ Նայասրանեայց Եկեղեցւոյ հնաւանդ կարգի պահպանման: Նշուող վայրերու մէջ գործող մեր հոգեւորականները ուշադիր կը հետեւէին իր ըրած ծիսական եւ վարչական կարգադրութիւններուն՝ ըստ կարելւոյն կիրարկելով զանոնք իրենց թեմերուն եւ ծովներուն մէջ:

Որպէս պատրիարք Կոստանդնուպոլսոյ՝ Գարեգին Սրբազան, կարելի է ըսել, եղաւ երկրորդ Օրմանեան մը, որ զիպցաւ իր քաղաքական ճկունութեամբ եւ անձնական հմայքով կապեր եւ բարեկամութիւններ հաստատել իր ժամանակի պետական ղեմքերուն հետ եւ այդ կապերուն շնորհիւ կարելի դարձուց անկարելին: Բարեկալեց եկեղեցիներու եւ իր հօտին վիճակը, արքայութիւն ձեռք բերաւ կրօնական թերթ հրատարակելու եւ դպրեմանք բանալու: Եւ այդ բոլորին եւ պատրիարքական բարձր պաշտօնին երկին կանգող փոքրահասակ ծերունի այդ հոգեւորականը, եւ երկրին բարձագոյն պաշտօնեաներուն հետ կապեր մշակող քա-

դաքագէտ ու վարչագէտ ազգապետը, երբեք չմոռցաւ իր համեստ հոգեւորական մը, հովիւ մը եւ -Քրիստոսի հետեւորդ մը ըլլալու գիտակցութիւնը: Վանական մըն էր ան բառին բովանդակ առումով՝ յամառ աշխարհող միայնակեաց մը, որ կը խորշէր արարաքին ամէն տեսակի շրջապատէն եւ փայլէ: Ուշագրաւ են անոր պաշտօնական եւ անպաշտօն նկարները, որոնց մէջ միշտ կ'երևի անպաճոյճ սեւ վերարկու հագած սպիտակամօրուս վարդապետը՝ առանց պանակէի, լանջախաչի եւ շքանշաններու: Իր համեստութիւնը, աշխատասիրութիւնը, ճկունութիւնը, ազգասիրութիւնը եւ նամանաւանդ իր եկեղեցասիրութիւնն ու հաւաքը օրինակ պէտք է ծառայեն մեր բոլորին՝ թէ հոգեւորականներուս եւ թէ ալ աշխարհականներուն:

Գարեգին պարրիարք հոգեւոր դպրոցի մը բացման համար սրացած արօքներէն էր քոյի ի բոլոր պիտի աշխարհէր յաջողցնելու իր երազը եւ 1953-ին տեսաւ այդ երազին իրականացումը: Այդ դպրոցի արդիւնքներուն մասին յաճախ ամփոփ եղած է անդրադառնալու եւ այս յուշահանդէսը տեղը չէ՞ անգամ մը եւս խօսելու այդ մասին: Արդեօք որքա՞ն մեծ պիտի ըլլար պոլսահայոց եւ հայ ժողովուրդի կորուստը վերջին յիսուն տարիներուն, եթէ Գարեգին պարրիարք ունեցած չըլլար տեսիլքը նոր դպրոց մը հիմնելու: Այս հարցումին պատասխանը բացայայտ կը դառնայ, եթէ նկարի առնուին կէս դարէ ի վեր Պոլսոյ եւ ի սփիւռս աշխարհի ցրուած հայկական այլեւայլ գաղութներու մէջ գործող հոգեւորական եւ ազգային գործիչները, մտաւորականները, գրողները, ուսուցիչները եւ մանաւանդ հայ կեանքը գաղթաշխարհի մէջ հովանաւորողները, որոնց զգալի տոկոսը արդիւնք է Ս. Խաչ Դպրեւանքին: Ինչպէս որ ինք Արմաշի մէջ պարարտ հողի մէջ ինկած հունք մը եղաւ որ տակաւ առ տակաւ աճեցաւ, ան իր կարգին Ս. Խաչ Դպրեւանքով ստեղծեց այն պարարտ հողը, որ դեռ մինչեւ այսօր կ'աճեցնէ ազգին եւ եկեղեցոյն սիրով փոքրուած սերունդներ:

Յաճախ մեր հին գրագիր մարտնչներու յիշատակարաններուն մէջ կը կարդանք գրիչներու իմաստալից խօսք՝ «Ձեռք երթայ, գիրս մնայ»: Արդարեւ՝ ամենակուր ժամանակը կրնայ մաշկեցնել եւ մոռացութեան թանձր թողով բոլորովին ծածկել նոյնիսկ աչքառու մեծագործութիւններ: Եւ մնայ միայն այն ինչ որ թողոյթի վրայ արձանագրուած է: Գարեգին Պարրիարքին մեզի ժառանգ մնացած է շատ հարուստ եւ սքանչելի գանձ մը գրական գոհարներու: Այդ գանձը մի քիչ պեղելէ ետք մարդ կ'անդրադառնայ թէ ինչպիսի իմացականութիւն մըն է զայն ստեղծագործողը, իսկական մտաւորական մը, որ իր ունեցած գիտութեան եւ փրամաբանօրէն արարայայտուելու կարողութեան կը միացնէ նաեւ զգայուն արուեստագէտ գրագէտի մը արժանիքը: Օրմանեան Սրբազան վաղուց արդէն երկարատար դարձապետին մէջ տեսած է անոր գրագէտի եւ բանասէրի կոչումը, երբ կ'ըսէ. «Վարչական եւ ուսուցչական ձիրքերու հետ» եւ թերեւս աւելի՝ գրականին հետամուտ էր նա, յարկապէս բանասիրական ճիւղը մշակելով»:

Անկարելի պիտի ըլլայ մի քանի վայրկեանի մէջ արժեւորել Գարեգին պարրիարքի գրական վաստակը: Իր անունը մշտապէս կապուած պիտի մնայ մեր մեծագոյն աղօթասաց վարդապետին՝ Ս. Գրիգոր Նարեկացիի «Մարեան ողբերգութեան» գործին հետ: Այդ գրքին արեւմտահայ թարգմանութիւնը իր կողմէ լոյս տեսաւ 1926-ին եւ դեռ մինչեւ այսօր կը պահէ իր գրական արժէքը: Բայց սոսկ թարգմանութիւն մը չէ այդ, այլ մերօրեայ մեկնութիւն մը կամ վերարարարութիւն մը Նարեկացիի աղօթաբոյր ներաշխարհը եւ վանական շրջապատը լաւ ճանչցող եւ զայն լիովին ապրող բանաստեղծի մը կողմէ: Թարգմանութեան

կցեալ ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ իր նիւթին մասին թարգմանիչին ունեցած խորունկ ծանօթութիւնը: Տարիներ ետք՝ Գարեգին պարբիարք, որ քաջահմուտ էր հայկական պաղաճափութեան, Նարեկը ամբողջութեամբ չափաճոյ փողերու պիտի վերածէր եւ հրապարակէր: Նկարագային հանգուցեալ պարբիարքին կարարած փողափողները եւ բնագրագիտական հեղափոխութիւններն ու սրբագրութիւնները պիտի օգտագործուէին Նարեկի քննական հրապարակութեան խմբագիրներուն կողմէ:

Նարեկի թարգմանութիւնը, ուսումնասիրութիւնը եւ բնագրի կազմութիւնը Գարեգին պարբիարքին պիտի ապահովէին ուրոյն եւ մնայուն փող մը մեր բանասիրութեան մէջ: Բայց անիկա շար աւելին ունէր տալիք իր ժողովուրդին: Դեռ իր երիտասարդական օրերուն երբ ուխտի գացած էր Արեւմտեան Նայաստանի կանգուն եւ աւերակ սրբալայրերը փնտնելու՝ իր ուղևորական յուշերը եւ յոյզերը գրի առած եւ հրապարակած էր «Տարօնաշունչ» հասարակական մէջ՝ ցուցաբերելով իրաւ գրագէտի մը փառանդը: Այդ փառանդը լրիւ ի յայտ պիտի գար «Աշխարհի լոյսն ի Նայս» երկհատոր գործին մէջ, որ քրիստոնեայ Նայաստանի պատմութեան վերաբերեալ ստուգապատմամբ աշխարասիրութիւն մը ըլլալով հանդերձ՝ շար հեռու է չոր ու ցամաք բանասիրական քննարկումէ: Ժողովուրդին համար գրուած է այդ գիրքը եւ կը նկրտի ընթերցողին հոգիին փոխանցելու հայկական քրիստոնէական ոգին: Գործին խորագիրն իսկ կը յուշէ որ անիկա բանաստեղծական թոխչքով գրուած սրեղծագործութիւն մըն է:

Գարեգին պարբիարք մեծ վաստակ ունի նաեւ Աստուածաշունչ մատենանի աշխարհաբար թարգմանութեան աշխատանքին մէջ: Նին Կրակարանէն թարգմանած է այլ եւ այլ գրքեր, իսկ Նոր Կրակարանը լրիւ թարգմանած է արեւմտահայ աշխարհաբարի: Այդ թարգմանութիւնը, որ ինք իր կենդանութեան հրապարակած էր, արժանացած է մէկէ աւելի փառաբանութիւններու եւ դեռ մինչեւ այսօր, մանր խմբագրական հպումներով, կը գործածուի սփիւռքի մեր եկեղեցիներուն մէջ: Այդ գործին յարկանշական է գրական արեւմտահայերէնի ջինջ եւ կենսունակ ոճը, որ բոլորին կողմէ հասկնալի ըլլալով հանդերձ չի գոհեցնուիր՝ միշտ մնալով իր գրական վեհութեան ոլորտին մէջ: Գրաբար բնագրին դիմաց, եւ օտար լեզուներով գիտական թարգմանութիւններու եւ ուսումնասիրութիւններու արդիւնքներուն զուգահեռ, աշխարհաբար թարգմանութեան մէջ իմաստի ճշգրտութիւնը պահելու ճիգը երբեք չէ առաջնորդած թարգմանիչը ճապաղելու եւ անկենդան լեզու մը օգտագործելու: Ընդհակառակը՝

Արփիարեաններու եւ Զօհրապներու մշակած մեր ժամանակակից գրական լեզուով է որ կ'արարայայտուին Բրիտանիա եւ անոր աւերաբանիչներն ու առաքեալները:

Գարեգին պարբիարքի գրական վաստակին մաս կը կազմեն նաեւ անոր խմբագրած կրօնական հանդէսները: Ժամանակակից սերունդներուն ծանօթ վերջին հրապարակութիւնը «Շողակաթ»ն է, որուն մէջ Գարեգին Սրբազան ստորագրած է հոգելից եւ հմարալից յօդուածներ: Իսկ այդ բոլորէն աւելին՝ իր անձին հմայքը այդ պարբերաթերթին շուրջ պիտի խմբէր ժամանակի յայտնի հոգեւորականներէն, մտաւորականներէն, բանաստեղծներէն եւ գրագէտներէն շարեր, որոնց ստորագրութիւնները կ'երևին մնայուն արժէք ներկայացնող գրութիւններու փակ:

Գարեգին Պապրիարքի կեանքը մերօրեայ հոգեւորականներու համար պարփի ծանայել որպէս հայելիի մէջ ցոլացումը մեզմէ իրաքանչիւրին իրելալին, ձգտումներուն եւ երազներուն: Այդ հայելիին մէջ իրաքանչիւր երիտասարդ հոգեւորական, ըլլայ ան օժտուած մեծ իմացականութեամբ եւ կամ սահմանափակ կարողութեամբ անձ մը, պիտի նշմարէ այն ինչ որ իրելական պարփի լինել իրեն համար:

Նայ հոգեւորականի պարպականութիւնն է «Աշխարհի լոյսն» սփռել «ի Նայս»: Այս է որ ըրաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ իր նշանաւոր քննարկով եւ առաքելական գործունէութեամբ: Նոյնն է որ ըրաւ նաեւ Գարեգին Պապրիարք Խաչատուրեան, որուն քսանամեայ պապրիարքութիւնը իրապէս անկրկնելի եւ արդիւնաշատ շրջան մը եղաւ, որ լուսաւորեց պահ մը Կ. Պոլսոյ հայութիւնը եւ շողեր արձակեց մինչեւ հեռաւոր գաղութներ: Մենք կը խոնարհինք մեծանուն պապրիարքին վաստակին առջեւ եւ կ'աղօթենք որ Աստուծոյ ջանքերէ մեր Եկեղեցին եւ մեր ժողովուրդը եւ շարունակէ պարգեւել իր հայագգի բանաւոր հօփին նոր եւ պանծալի դէմքեր, ինչպէս՝ Յովհաննէս Կոյուբը, Յակոբոս Նալեանը, Խրիմեան Նայրիկը, Իգմիրլեանը, Օրմանեանը, Եղիշէ Դուրեանը, Բարգէն Կիւլեւերեանը, Թորգոմ Գուշակեանը եւ Գարեգին Խաչատուրեանը: Բիւր յարգանք անոնց խնկելի յիշատակին: